ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք.Երևան, Արգիշտի 1

№ 16/105427-22«12 » հոկտեմբերի2022թ.

«ԷՅ ՎԻ ԷՆ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության
տնօրեն՝ Գ.Բեզիրջյանին
/ք. Երևան, Բյուզանդի1/3/

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ԷՅ ՎԻ ԷՆ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանմիջև 15.03.2022 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/18» ծածկագրով աշխատանքներիկատարման գնման պայմանագրի(այսուհետ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է.իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ.87 մանկապարտեզի հիմնանորոգման և բակի բարեկարգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներիկատարման պարտավորությունը(այսուհետ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի(այսուհետ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցովնախատեսված է եղել աշխատանքները ավատել հուլիս ամսին, սակայն նախատեսված աշխատանքները չեն կատարվել մինչ այս պահը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը.

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին

բ) խախտվել է աշխատանքնի կատարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԷՅ ՎԻ ԷՆ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ Պատվիրատուն միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

Invalid signature

X

ԽՈՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Signed by: GRIGORYAN KHOREN 2105860664

ԽՈՐԵՆ